ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 04-Ի ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան **«04» փետրվար 2026թ.**

2026 թվականի փետրվարի 04-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) Կառավարման խորհրդի (այսուհետ՝ ԿԽ) նիստը՝ հեռակա քվեարկություն անցկացնելու միջոցով:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված են հետևյալ հարցերը.

1. Տեսչական մարմնի 2025 թվականի տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում.

2. Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2025 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում.

3. Տեսչական մարմնի 2025 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագծի քննարկում և հաստատում.

Կառավարման խորհրդի անդամների կողմից օրակարգի հարցերի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

Քվեարկությանը մասնակցեցին՝

Դ. Խուդաթյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար (խորհրդի նախագահ)

Տ. Հակոբյան- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ

Ն. Հովակիմյան- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ե. Վարդանյան- Քաղաքաշինության կոմիտեի նախագահ

Ս. Թովմասյան- Կադաստրի կոմիտեի ղեկավար

Տ. Քեյան- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ

Տ. Բաբայան- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Դ. Սողոմոնյան- «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հողաշինարարություն և հողային կադաստրի

ամբիոնի ասիստենտ, համալսարանի գիտական խորհրդի անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու

Քվեարկությանը չի մասնակցել՝

Ա. Ավանեսյանը- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ:

Տ. Դադունց- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Վ. Հարությունյան- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետի դեկանի ժ/պ, դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու:

Կ. Ցուցուլյան - ներքին գործերի նախարարի տեղակալ

Քվորում առկա է:

Օրակարգում ընդգրկված 1-ին հարցի վերաբերյալ խորհուրդը էլեկտրոնային քվեարկությամբ, ձայների «8» կողմ «0» դեմ համամասնությամբ հաստատեց Տեսչական մարմնի 2025 թվականի տարեկան հաշվետվությունը:

Օրակարգում ընդգրկված 2-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը էլեկտրոնային քվեարկությամբ, ձայների «8» կողմ «0» դեմ համամասնությամբ քվեարկեց Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2025 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվությանը:

Օրակարգում ընդգրկված 3-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը էլեկտրոնային քվեարկությամբ, ձայների «8» կողմ «0» դեմ համամասնությամբ հաստատեց Տեսչական մարմնի 2025 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

2/5/2026

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Դ. Խուդաթյան**

Կառավարման խորհրդի քարտուղար՝ **Վ. Պոկացյան**